

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Յիշէ՛, Տէր, քեզի ծառայողները. - Մեր ծնողները, ուսուցիչները, եղբայրներն ու քոյրերը, ընկերները, մեզ կերակրողները, ուխտաւորները, ճամբորդները, մեզ հանգստացնողները, վաստակաւորները, խոստովանողները, ապաշխարողները, գերիները, հիւանդները, նեղեալները, իշխանութեան գլուխ գտնուողները, մեզի չարիք ընողները, բարերարները, թշնամիները, մեզ ատողները. եւ անոնք՝ որոնք հաւատքով դաստիարակեցին մեզ: Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛: Բարերար եւ բազումողորմ Աստուած, քու անմոռաց գիտութեամբդ եւ անբաւ մարդասիրութեամբդ յիշէ՛ բոլոր քեզի հաւատացողները, եւ ողորմէ՛ բոլորին: Օգնէ՛ եւ փրկէ՛ ամէն տեսակի վտանգներէն ու փորձութիւններէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Յովհաննէս սարկաւազ վարդապետ